**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արևուտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Արևուտ, +37494979724, arevut10@mail.ru

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

11 ՕԳՈՍՏՈՍԻ 2026թվականի N 25-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 11-Ի ԹԻՎ 7-ՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Արագածոտնի մարզի Արևուտ համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Արևուտ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արևուտ համայնքի ավագանու 2026 թվականի օգոստոսի 11-ի թիվ 7-րդ արտահերթ նիստի օրակարգը.

1.Հայաստանի Հանրապետության 2027 թվականի պետական բյուջեից համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված նպատակային հատկացումներ ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետության Արևուտ համայնքի Դդմասար բնակավայրի ջրագծի ներքին ցանցի կառուցման աշխատանքների ծրագրային հայտին համաձայնություն տալու մասին:

2.Արևուտ բնակավայրի վարչական տարածքում գտնվող Արթին լեռի օբսիդիանի հանքավայրի Սևքար տեղամասի օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքների իրականացման նախաձեռնության վերաբերյալ <<Գլոբալ Գրուպ >> ՍՊԸ-ին նախնական համաձայնություն տալու մասին:

3.Արևուտ բնակավայրի վարչական տարածքում գտնվող Արթին լեռի օբսիդիանի հանքավայրի օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքների իրականացման նախաձեռնության վերաբերյալ <<Գլոբալ Գրուպ >> ՍՊԸ-ին նախնական համաձայնություն տալու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼՈՅԱՆ ԹԵՆԳԻԶ

ԲԱՔՈՅԱՆ ՋԱԴԱ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՕՍԵՅԱՆ ՏԻՏԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԻԿ ՕՍԵՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

այաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արևուտ համայնք
Հ, Արագածոտնի մարզ, գ.Արևուտ, +37494979724, arevut10@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՕԳՈՍՏՈՍԻ 2026թվականի N 26-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2027 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆՊԱՍՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԴՄԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՋՐԱԳԾԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության 2027 թվականի պետական բյուջեից տրամադրվող սուբվենցիա ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արևուտ համայնքի <<Դդմասար բնակավայրի ջրագծի ներքին ցանցի կառուցում>> սուբվենցիայի ծրագրային հայտը համաձայն հավելվածի:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼՈՅԱՆ ԹԵՆԳԻԶ

ԲԱՔՈՅԱՆ ԶԱԴԱ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՕՍԵՅԱՆ ՏԻՍԱԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԻԿ ՕՍԵՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արևուտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Արևուտ, +37494979724, arevut10@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՕԳՈՍՏՈՍԻ 2026թվականի N 27-Ա

### ԱՐԵՎՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԹԻՆ ԼԵՌԻ ՕԲՍԻԴԻԱՆԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՍԵՎՔԱՐ ՏԵՂԱՄԱՍԻ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ «ԳԼՈԲԱԼ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշման հավելվածով սահմանված տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնություն տալու ընթացակարգի 28-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզի Արևուտ համայնքի Արևուտ բնակավայրում գտնվող Արթին լեռի օբսիդիանի Սևքար տեղամասի ընդերքօգտագործման իրավունքի թույլտվության նախաձեռնության վերաբերյալ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման համար անցկացված հանրային քննարկման արձանագրությունը, հաշվի առնելով «Գլոբալ Գրուպ» ՍՊ ընկերության տնօրենի գրությունը՝

Արևուտ համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ նախնական համաձայնություն «Գլոբալ Գրուպ» ՍՊ ընկերությանը Արթին լեռի օբսիդիանի հանքավայրի Սևքար տեղամասի ընդերօգտագործման իրավունքի թույլտվության աշխատանքների իրականացման նախաձեռնության համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼՈՅԱՆ ԹԵՆԳԻԶ

ԲԱՔՈՅԱՆ ԶԱԴԱ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՕՍԵՅԱՆ ՏԻՏԱԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՕՍԵՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
# ԱՐԵՎՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արևուտ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Արևուտ, +37494979724, arevut10@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՕԳՈՍՏՈՍԻ 2026թվականի N 28-Ա

### ԱՐԵՎՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԹԻՆ ԼԵՌԻ ՕԲՍԻԴԻԱՆԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ «ԳԼՈԲԱԼ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշման հավելվածով սահմանված տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնություն տալու ընթացակարգի 28-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզի Արևուտ համայնքի Արևուտ բնակավայրում գտնվող Արթին լեռի օբսիդիանի ընդերքօգտագործման իրավունքի թույլտվության նախաձեռնության վերաբերյալ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման համար անցկացված հանրային քննարկման արձանագրությունը, հաշվի առնելով «Գլոբալ Գրուպ» ՍՊ ընկերության տնօրենի գրությունը՝

Արևուտ համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ նախնական համաձայնություն «Գլոբալ Գրուպ» ՍՊ ընկերությանը Արթին լեռի օբսիդիանի հանքավայրի ընդերքօգտագործման իրավունքի թույլտվության աշխատանքների իրականացման նախաձեռնության համար:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼՈՅԱՆ ԹԵՆԳԻԶ

ԲԱՔՈՅԱՆ ՋԱԴԱ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՕՍԵՅԱՆ ՏԻՏԱԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԻԿ ՕՍԵՅԱՆ